ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/37» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Բաբինյան
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Անտոնյան, Տ. Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

<u>Էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին</u>

(Կ. Բաբինյան)

1. Փաստաթղթերի գնահատման՝

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321/1 սենյակ., -օրը՝ 05.02.2019թ., -ժամը՝ 11:30

Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում է ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, որի տրամադրված եզրակացության համաձայն՝ մասնակցի կողմից ներկայացրած հայտարարությունը համարվել է իրականությանը համապատասխանող:

Որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերն է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	տվյալները
1	ՄԻԲՍ ՍՊԸ	անբավարար

ՄԻԲՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերում բացակայում է նախկինում կատարած պայմանագրի հաշիվ ապրանքագրերի պատճենները և պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 47-րդ կետով, որոշեց առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային օրում շտկել առկա անհամապատասխանությունը: Անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

Նախագահ՝ ---------- Կ. Բաբինյան

Անդամներ՝ ---------- Գ. Անտոնյան

---------- Տ. Սարգսյան

Քարտուղար՝ ---------- Ի. Եղիազարյան